

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Պատմական գիտ. դոկտոր, ՄՄ

ՀՈՈՍԿԱԼԱՆ ՈՐՊԵՍ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՆՏՍ ԵՒ ՏԵՂԻ ԶԵՆԱԳՐԵՐԻ ՀԻՇՆՏԱԿԱՐԱՆՆԵՐԸ (ԺԲ. ԳԱՐ)

ՆԱԽԱԲԱՆ

Նայ միջնադարյան պատմության մեջ բացառիկ դեր կատարած վայրերից է Հռոմկլա անառիկ բերդը, որը հայերին անցնելու ժամանակից՝ 1151 թ., մինչև նրա գրավումը Եգիպտոսի մամլուքներից՝ 1292 թ., եղել է Ամենայն Հայոց կաթողիկոսների աթոռանիստը եւ կարեւորագույն հոգեւոր-մշակութային կենտրոն: Կաթողիկոսարանի գիվանից կամ նոտարատնից բացի՝ Հռոմկլայում գործել է գրչատուն՝ իր հմուտ գրիչներով, մանրանկարիչներով եւ կազմարարներով, որոնց ստեղծած շուրջ չորս տասնյակ մատյան է հասել մեր օրերը: Հռոմկլայում գրված ձեռագրերի հիշատակարանները զանազան տեղեկություններ են պարունակում բերդավանի ու նրա բնակիչների մասին, եւ ներկա հրապարակման նպատակը Հռոմկլայում ԺԲ. դարում գրված հիշատակարանների ներկայացումն ու քննությունն է:

Հռոմկլա բերդը գտնվում է Եփրատացիք երկրամասում՝ Եփրատ գետի աջ ափին, նրա՝ Փարզման վտակի հետ միախառնման տեղում՝ Ժայռային հրվանդանի վրա: Բերդն ունեցել է բարձր պարիսպներ՝ ուղղանկյուն աշտարակներով:

Վաղ շրջանում՝ Հռոմեական եւ Բյուզանդական տիրապետության ժամանակներում, Հռոմկլան եղել է կարեւոր գետանց եւ սահմանային բերդ, որտեղից էլ ծագում է նրա անունը (հռոմեական կամ հռոմենների բերդ): Բյուզանդական տիրապետության վերջում՝ ԺԱ. դ. 70-ական թվականներից սկսած, Հռոմկլան գտնվել է նախ Փիլարտոս Վարաժնունու, ապա Գող Վասիլի հայկական իշխանությունների կազմում, որից հետո՝ 1116 թ., անցել է խաչակիրներին՝ Եդեսիայի կոմսությանը: Հայտ-

* Ստացվել է՝ 8.09.2023, գրախոսվել է՝ 12.09.2023: Էլ. հասցե՝ karenmatevosian@gmail.com:

նի է նաեւ, որ 1138 թ. Քեսունից բավական թվով հայեր վերաբնակվել են Հռոմկլայում²:

ՀՌՈՄԿԱԼԱՆ ՈՐՊԵՍ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՆԻՍՏ

Նախ տեսնենք, թե ինչ հանգամանքներում է Հայոց կաթողիկոսական աթոռը հաստատվել Հռոմկլայում: Հայտնի է, որ Անիի թագավորության անկումից հետո (1045 թ.) բյուզանդացիների հարկադրանքով կաթողիկոսական աթոռը դուրս է բերվում Բագրատունյաց մայրաքաղաքից եւ անգամ Մեծ Հայքի սահմաններից՝ կարճ ժամանակով հաստատվելով Սեբաստիայում, Թավրուզում, Ծամնդավում, իսկ ԺԲ. դ. սկզբներին՝ Քեսունի Կարմիր վանքում եւ Տլուք գավառի Ծով (կամ Ծովք) ամրոցում³: Այս վերջինը մայրական գծով Պահլավունյաց տոհմից սերող Ապիրատ իշխանի⁴ փոքր բերդն էր, որ հաճախ ենթարկվում էր շրջակա մահմեդական իշխանությունների հարձակումներին, որոնցից մեկի ժամանակ պարիսպների վրա զոհվեց իշխանը (հավանաբար՝ 1112 թ.): Նրա որդին՝ Հայոց կաթողիկոս Գրիգոր Գ. Պահլավունին (1113–1166), որն իր եղբայր Վասիլին պատկանող Ծով ամրոց էր տեղափոխվել Եղեսիայի կոմսության ճնշման հետեւանքով, Քեսունի հայկական իշխանության անկումից հետո՝ 1116 թ., ձգտում էր մեկ այլ՝ ավելի կայուն ու անվտանգ աթոռանիստ ունենալ: Սմբատ Սպարապետի տեղեկության համաձայն՝ «Զայսու ժամանակաւ սուրբ կաթողիկոսն Հայոց տէր Գրիգորիս կայր ի փոքրագոյն դղեակն Ծովք.... եւ անդ բնակէր հանդերձ եղբարբն տէր Ներսիսիւ, եւ աշակերտօքն, եւ ամենայն կահիւ սրբոյ աթոռոյն»⁵: Պատմիչ Սամվել Անեցու վկայությամբ (որն իր

² Այս մասին հայտնում է Մատթեոս Ուռհայեցու ժամանակագրության շարունակող Գրիգոր Երեցը (ՄԱՏԹԵՈՍ ՈՒՐՀԱՅԵՑԻ, Ժամանակագրություն (աշխարհաբար թարգմ. եւ ծանոթ.՝ Հ. Բարթիկյանի), Երեւան, 1991, էջ 406–407):

³ Բ. ԿԻՒԼԷՍԵՐԵԱՆ, Ծովք, Ծովք-Տլուք եւ Հռոմ-Կլայ: Պատմական եւ տեղագրական ուսումնասիրություն, Վիեննա, 1904, էջ 1–13: Գրիգոր Երեցը բերդի մասին գրում է. «...յերկիրն Տլքոյ, ի բերդն կաթողիկոսի, որ կոչի Ծով» (ՄԱՏԹԵՈՍ ՈՒՐՀԱՅԵՑԻ, Ժամանակագրություն, էջ 476):

⁴ Ապիրատը նշանավոր իշխան Գրիգոր Մագիստրոս Պահլավունու դստեր որդին էր: Ապիրատ անունը ծագում է հայրական պապի՝ Գրիգոր Ապիրատ Մագիստրոսի անունից: Այս մասին տես Կ. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ, Գրիգոր Ապիրատ Մագիստրոսը եւ նրա տոհմը 11-րդ դարում, «Բանբեր Մատենադարանի», թիվ 18, Երեւան, 2008, էջ 67–93:

⁵ ՍՄԲԱՏԱՅ ՍՊԱՐԱՊԵՏԻ Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 161: Այս եւ հաջորդ մեջբերումներում ընդգծումները մերն են. — Կ.Մ.:

պատմությունը գրել է Գրիգոր Գ. Պահլավունու պատվերով)՝ կաթողիկոսն անգամ բանակցում է Անիի Աբուլասվար ամիրայի հետ՝ հայրապետական աթոռը երբեմնի մայրաքաղաք ու աթոռանիստ Անի վերադարձնելու համար, բայց որոշ իրադարձությունների՝ Վրաց թագավորի կողմից 1124 թ. քաղաքի գրավման եւ քաղաքական անկայունության պատճառով այդ բանը չի հաջողվում⁶:

Գրիգոր Գ. Պահլավունին ավելի ապահով աթոռանիստ գտնելու որոնումների ճանապարհին Թլպաշար ամրոցում հանդիպում է Եղեսիայի կոմս Զոսլին Բ.-ի այրի Բեատրիս կոմսուհուն, որը համաձայնում է իրեն պատկանող Հռոմկլա բերդն առժամանակ տրամադրել Հայոց կաթողիկոսին մինչեւ իր որդու՝ Զոսլին կրտսերի վերադարձը: Շատ չանցած՝ վերջինս վերադառնում է Եւրոպայից, սակայն չի կամենում հաստատվել Հռոմկլայում, քանի որ չորս կողմը գրավել էին մահմեդականները, ուստի Գրիգոր Գ. Պահլավունուց դրամական փոխհատուցում ստանալով՝ համապատասխան գրույթամբ բերդի սեփականությունը փոխանցում է Հայոց կաթողիկոսին: Այս մասին պատմում է Սմբատ Սպարապետը. «Եւ զկնի ժամանակաց ետուն Ճօսլինն Ժենի. (15 000) դահեկան ի գինն Հռոմկլային: Իսկ կոմսն Ճօսլինն ետ տէր Գրիգորիսի եւ տէր Ներսիսի զգիր ձեռին իւրոյ՝ զի Հռոմկլայն յախտեան մնացէ աթոռ հայրապետացն Հայոց. եւ նոքա եղին զնոյն գիր յարկեղ սրբոյ աթոռոյն ի յիշատակ ապագայիցն»⁷: Այսպիսով՝ թերեւս պատմության մեջ առաջին անգամ Հայոց կաթողիկոսը դառնում է նաեւ բերդատեր՝ օժտված այդ վայրի նկատմամբ աշխարհիկ իշխանությամբ:

Կաթողիկոսարանի՝ Հռոմկլայում հաստատվելու թվականի վերաբերյալ պատմիչների գործերում ստույգ հիշատակում չլինելու պատճառով գրականության մեջ հիմնականում երեք թվական է շրջանառվում՝ 1149, 1150, 1151: Այս հարցի շուրջ չծավալվելու համար մեջբերենք Մաղաքիա պատրիարք Օրմանյանի կարծիքը. «Մեր տեսութեամբ հազիւ թէ տարի մը Հռոմկլայ իբր աւանդ մնացած կրնայ ըլլալ կաթողիկոսին ձեռքը, եւ 1150-է կրնանք հաշուել տիրապետութեան սկիզբը, որով կաթողիկոսներ աւատապետ իշխանի դիրքը ստանձնեցին իրենց բերդին մէջ»⁸:

⁶ ԱՄՄՈՒՔԻ ԱՆԵՏԻ ԵՒ ՇԱՐՈՒՆԱԿՈՂՆԵՐ, Ժամանակագրութիւն, աշխատ.՝ Կ. Մաթեոսյանի, Երեւան, 2014, էջ 14–16, 206–208:

⁷ ՄՄԲԱՏԱՅ ՍՊԱՐԱՊԵՏԻ Տարեգիրք, էջ 169:

⁸ Մ. ՕՐՄԱՆՅԱՆ, Ազգապատում, հտ. Ա., Սբ. էջմիածին, 2001, էջ 1609:

Նախորդ ուսումնասիրողների ուշադրությունից վրիպած՝ 1151 թ. Ծով ամրոցում Հովհաննես գրչի թողած մի հիշատակարանից կարելի է ենթադրել, որ այդ ժամանակ կաթողիկոսական նստավայրը դեռևս հիշյալ ամրոցում էր. «Յամի վեցհարիւրերորդի (1151), Արամեանս տումարի, ի հայրապետութեան տեառն Գրիգորիսի Հայոց հեղինակի եւ եղբար նորա՝ Ներսիսի.... գրեցաւ Աւետարանս այս լընդիր եւ ի ստոյգ աւրինակէ, յամրոցիս՝ որ կոչի Ծով, ընդ հովանեաւ Սրբոյ Աստուածածնիս եւ Սրբոյ Նշանիս: Բայց գրեցաւ հրամանաւ աշխարհալոյս վարդապետին իմոյ Գէորգեայ....»⁹: Թեեւ հիշատակարանում հստակ չի ասվում կաթողիկոսի՝ Ծովում գտնվելու մասին, բայց դա երեւում է ենթաբովանդակությունից: Ամեն դեպքում, կարծում ենք, որ կաթողիկոսարանի վերջնական տեղափոխությունը Հռոմկլա տեղի է ունեցել նույն՝ 1151 թվականին:

Այս հիշատակարանում ուշագրավ է նաեւ Ծովի եկեղեցիների՝ Սբ. Աստվածածին եւ Սբ. Նշան անունների նշումը, որոնք, ինչքանով որ մեզ հայտնի է, միասին այլ աղբյուրներում չեն հիշատակվում: Միայն 1147 թ. Ուռհայում գրված մի հիշատակարանում նշվում է, որ ձեռագրի ստացող Ստեփանոս կրոնավորը «Ծովուց վանքի» Սբ. Նշանի սպասավորն է եղել. «Գրեցաւ.... հրամանաւ Ստեփանոսի սրբազան եւ մաքրափայլ կրանաւորի՝ սպասաւորի Սրբոյ Նշանին, որ է ի Ծովուց վանսն, մերձ ի սահմանս ամրոցին, որ կոչի Հռոմկլայ»¹⁰:

Հարկ է նշել, որ այս շրջանում Հայոց կաթողիկոսները սերում էին Պահլավունյաց տոհմից: Առաջին կաթողիկոսն Անիի նշանավոր իշխան եւ գիտնական Գրիգոր Մագիստրոս Պահլավունու որդի Վահրամն էր, որ հոգեւորական դառնալով՝ Գրիգոր անունն ընդունեց: Վկայասեր մականունով հայտնի Գրիգոր Պահլավունին աթոռակալեց 1066–1113 թթ.: Նրա ընտրությունը կայացավ հիմնականում Պահլավունի լինելու շնորհիվ, քանի որ, ըստ հիշյալ ժամանակաշրջանում տարածված կարծիքի, այդ տոհմը սերում էր Սբ. Գրիգոր Լուսավորչից¹¹:

Հաջորդ կաթողիկոսները Պահլավունյաց տոհմի հետ կապված էին մայրական գծով: Գրիգոր Բ. Վկայասերի քրոջ որդի Ապիրատ իշխանի որ-

⁹ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե.–ԺԲ. դարեր, աշխատ.՝ Ա. ՄԱԹԵՒՈՍՅԱՆԻ, Երեւան, 1988, էջ 166:

¹⁰ Անդ, էջ 165:

¹¹ Այս մասին հանգամանորեն տե՛ս Կ. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ, Անիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր Մագիստրոս, Երեւան, 2015, էջ 36–82:

դիներն էին կաթողիկոսներ Գրիգոր Գ. Պահլավունին, ապա նրա եղբայրը՝ Ներսես Շնորհալին (1166–1173): Այնուհետև կաթողիկոսական աթոռն անցել է նրանց ավագ եղբոր՝ Վասիլի որդի Գրիգոր Դ. Տղային (1173–1193), իսկ նրա մահից հետո՝ Վասիլի դստեր որդի Գրիգոր Ե. Քառավեժին (1194): Նույն տոհմից հաջորդ էլ վերջին կաթողիկոսը Գրիգոր Գ.-ի էլ Ներսես Շնորհալու եղբոր՝ Զորավարի որդի Գրիգոր Զ. Ապիրատն էր (1194–1203):

Այս տոհմի կաթողիկոսներից Հռոմկլայի անունը՝ որպես մականուն, կապվել է միայն Ներսեսի անվանը, որը Հայոց հայրապետների շարքում կոչվում է Ներսես Դ. Կլայեցի: Հռոմկլայում Պահլավունի կաթողիկոսների ժառանգականության շղթան ընդհատվեց Կիլիկիայի հայոց առաջին թագավոր Լեւոն Մեծագործի միջամտությամբ՝ Հովհաննես Զ. Սսեցու (1203–1221) ընտրությամբ:

Հռոմկլայի առաջին եկեղեցիների հիմնադիրը եղել է Գրիգոր Գ. Պահլավունին, որը կառուցել է Սբ. Գրիգոր Լուսավորիչ էլ Սբ. Աստվածածին եկեղեցիները: Գրիգոր Դ. Տղա կաթողիկոսը կառուցել է մի եկեղեցի՝ «ի նմանութիւն յարեւելեան տաճարացն», այսինքն՝ Հայաստանի եկեղեցիների նմանությամբ, միաժամանակ եկեղեցու մոտ կառուցել է դամբարաններ իր տոհմակից նախորդների՝ Գրիգոր Գ. Պահլավունու էլ Ներսես Դ. Շնորհալի կաթողիկոսների համար, նաեւ Ծովամորոցից այստեղ է բերել իրենց նախնի Գրիգոր Բ. Վկայասեր կաթողիկոսի նշխարները: Սամվել Անեցու ժամանակագրության մեջ այս մասին հետևյալ արժեքավոր լրացումն է արված. «Տէր Գրիգոր ամս Ի. (20): ...Սա շինեաց ի Կլայն հոյակապ եկեղեցի, ի նմանութիւն յարեւելեան տաճարացն էլ պատրաստեաց ի նմա զդիրս Բ. (2) լուսաւորչացն՝ զհօր եղբարցն իւրոց, զաւր Գրիգորիսի էլ զՆերսեսի: Հանէ էլ ի Ծովուցն զնշխարս Մեծին Գրիգորիսի, զքեռոյն Ապիրատայ՝ հաւոյն իւրոյ՝ զՏէր Վահրամայ, էլ դնէ ընդ երկուց լուսաւորչացն»¹²:

Հռոմկլայում գումարվել են եկեղեցական ժողովներ, տեղի ունեցել կաթողիկոսական ընտրություններ, Բյուզանդական, ապա՝ Հռոմի Կաթոլիկ եկեղեցիների հետ վարվել բանակցություններ: Այստեղ ստեղծվել է նամակներ ու փաստաթղթեր պարունակող հարուստ կաթողիկոսական

¹² ՍԱՄՈՒԷԼ ԱՆԵՑԻ ԵՒ ՇԱՐՈՒՆԱԿՈՂՆԵՐ, նշ. աշխ., էջ 221–222:

դիվան, որի բազմաթիվ վավերագրեր հասել են մինչև մեր օրերը¹³: Հայոց կաթողիկոսարանի արդյունաշատ գործունեությունը Հռոմկլայում մի առանձին ծավալուն նյութ է՝ հիմնականում ուսումնասիրված, եւ դրան այստեղ անդրադառնալը դուրս է մեր նպատակից:

Խաչակիրների՝ ցամաքային բոլոր բերդերին տիրանալուց հետո՝ 1292 թ., Եգիպտոսի մամլուքյան սուլթան Մելիք Աշրաֆը մեծ արշավանք է ձեռնարկում՝ Հռոմկլան գրավելու նպատակով: Պաշարված բերդաքաղաքը երեսուներեք օր տեւած հերոսական դիմադրությունից հետո, դրսից օգնություն չստանալով, ի վերջո գրավվում է, կողոպտվում, կաթողիկոս Ստեփանոս Դ. Հռոմկլայեցին գերեվարվում է, իսկ բուն բերդավանը սուլթանի հրամանով ավերակների է վերածվում¹⁴: Դրանից հետո կաթողիկոսական աթոռը հաստատվում է Կիլիկյան Հայաստանի Սիս մայրաքաղաքում:

Որպես կաթողիկոսանիստ՝ Հռոմկլան կարեւորագույն դեր է կատարել ԺԲ.-ԺԳ. դդ. հայ հոգեւոր եւ մշակութային կյանքում, որն այդ ժամանակ վերելք էր ապրում: Այդ զարթոնքի շրջանի նշանավոր գործիչներից էին Գրիգոր Գ. Պահլավունի (նաեւ Փոքր Վկայասեր անվանված), Ներսես Դ. Շնորհալի եւ Գրիգոր Դ. Տղա կաթողիկոսները, որոնք մատենագրական մեծածավալ ժառանգություն են թողել:

ՀՌՈՄԿԼԱՅԻ ԺԲ. ԴԱՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԸ

Բացառիկ էր Հռոմկլան որպես գրչության կենտրոն: Տեղի գրչատունը գործում էր անմիջականորեն կաթողիկոսների հովանավորությամբ, ձեռագրական պատվերներ ստանում ոչ միայն բարձրաստիճան հոգեւորականներից, այլեւ Կիլիկյան Հայաստանի թագավորներից, թագուհիներից, իշխաններից: Գրչության եւ մանրանկարչության արվեստը Հռոմկլայում հասել է բարձրագույն մակարդակի: Բավական է հիշել, որ իր կյանքն ու գործունեությունն այստեղ է անցկացրել հայ մանրանկարչության ամենանշանավոր վարպետներից մեկը՝ Թորոս Ռոսլինը:

¹³ Տէս Ա. ԲՈՋՈՅԱՆ, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը, Երեւան, 1995: Հեղինակն այս թեմային հանգամանորեն անդրադարձել է նաեւ իր մի շարք այլ հրապարակումներում:

¹⁴ Այս մասին հանգամանորեն տե՛ս Գ. Դանիելյանի՝ արաբական աղբյուրների հիման վրա արված հրապարակումը («Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում» (պատմաբանասիրական ակնարկներ), հեղինակներ՝ Ա. ԲՈՋՈՅԱՆ, Ռ. ՇՈՒԲՈՒՐՈՎ, Վ. ՏԵՐ-ՂԵՒՆԳՅԱՆ, Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ, Երեւան, 2016, էջ 200–285):

Հռոմկլայում գրված բոլոր ձեռագրերն ունեցել են հիշատակարաններ, մատյանների մի մասը մեզ չի հասել, կամ դրանց գտնվելու վայրն այժմ անհայտ է, բայց ժամանակին (ԺԹ. դարի վերջ, Ի. դարի սկիզբ) այդ ձեռագրերի հիշատակարաններն արտագրվել ու հրատարակվել են տարբեր գրքերում, որի շնորհիվ տեղ են գտել նաև հիշատակարաններ պարունակող ժողովածուներում:

Հարկ է նշել, որ միջնադարյան հայկական բնակավայրերի եւ այնտեղ ապրողների վերաբերյալ շատ քիչ տեղեկություններ են մեզ հասել: Պատմիչները մեծ մասամբ գրում են պատմական դեպքերի, խոշոր իրադարձությունների կամ աշխարհիկ ու հոգեւոր հայտնի գործիչների մասին, իսկ առօրյա կյանքը, հասարակ մարդիկ հիմնականում մնում են անհայտության մեջ: Դա վերաբերում է նաև Հռոմկլային, որն առավել հաճախ հիշատակվում է Հայոց կաթողիկոսների գործունեության առնչությամբ: Այնուամենայնիվ, ձեռագրերի հիշատակարանները պարունակում են զանազան տեղեկություններ, որոնք հետաքրքրություն են ներկայացնում բերդավանի պատմության ու նրա բնակիչների մասին: Իհարկե, հիշատակարանները, իրենց բնույթին կամ պայմանականորեն ասած՝ «գրական տեսակին» համապատասխան, սովորաբար սահմանափակ տվյալներ են ամփոփում: Դրանց հիմնական դերը ձեռագրի ստեղծման հանգամանքների եւ տվյալների փոխանցումն է: Հիշատակարաններում նշվում է, թե ովքեր են եղել ձեռագրի գրիչը, մանրանկարիչը, պատվիրատուն, որ թվականին, որտեղ եւ որ եկեղեցու հովանու ներքո է այն գրվել, ովքեր են ժամանակի աշխարհիկ եւ հոգեւոր տերերը: Սակայն դրա հետ մեկտեղ հաճախ նշվում են նաև հարակից տվյալներ՝ տեղեկություններ ստացողների ազգականների կամ գրչությանն առնչված այլ անձանց, գրչության որոշ հանգամանքների, ստույգ տեղի ու եկեղեցիների մասին (վերելում արդեն տեսանք, որ Ծով ամրոցի Սբ. Աստվածածին եկեղեցու անունը պահպանվել է միայն տեղում գրված մի հիշատակարանի շնորհիվ), արձանագրում են ժամանակի տարաբնույթ իրադարձությունները, որոնք երբեմն լրացնում են պատմիչների հայտնած տեղեկությունները եւ այլն: Կարելի է ընդգծել հիշատակարաններում առկա տեղեկությունների արժանահավատության հանգամանքը, քանի որ դրանցում ականատեսի ձեռքով արձանագրվում էին ձեռագրի գրչության ավարտման ժամանակի, այսինքն՝ հենց

տվյալ տարվա իրողություններն ու փաստերը: Ձեռագրերում հիշատակարաններ գրվում էին նաեւ հետագայում, գրչությունից բավական ժամանակ անց՝ նոր ստացողների անունից, որոնք նույնպես արժեքավոր են որպես տվյալ ժամանակի արձանագրումներ:

Ստորեւ ժամանակագրական կարգով եւ գրիչ-հեղինակների անուններով կներկայացնենք Հռոմկլայում ԺԲ. դարում գրված հիշատակարանները, նաեւ որոշ քաղվածքներ Սկեւոյում գրված, բայց Հռոմկլայի մասին տվյալներ պարունակող մի հիշատակարանից՝ քննության նյութ դարձնելով դրանցում եղած ուշագրավ մանրամասները:

1166 թ., ԿՈՉՄԱ ԳՐԻՉ

Հռոմկլայից մեզ հայտնի ամենավաղ մատյանն այժմ Մատենադարանում պահվող 1166 թ. մի Ավետարան է, գրիչ եւ ծաղկող՝ Կոզմա Խարբերդցի (ՄՄ 7347): Սա Կոզմայից պահպանված ամենավաղ մատյանն է, հայտնի են եւս չորսը՝ գրված ավելի ուշ շրջանում՝ հիմնականում Խարբերդի տարածքում:

Ուշագրավ է, որ ձեռագիրը գրվել է Հռոմկլայում աթոռակալած առաջին կաթողիկոս Գրիգոր Գ. Պահլավունու կյանքի վերջին տարում, իսկ պատվիրատուն Առաքել արքեպիսկոպոսն է, որ հիշատակարանում կոչվում է «Անժտունեայ» վերագրիտող, այսինքն՝ հոգեւոր առաջնորդ: Խոսքը Խարբերդի շրջանի մասին է, եւ «Անժտունեայ» անվանումն էլ ծագում է Անձիտ գավառանունից: Հիշատակարանի՝ գրչությանը վերաբերող հատվածը հետեւյալն է. «[Կա]տարեցի.... սուրբ Աւետարանս.... ի յամի վեց հարիւրերորդի հնկետասաներորդի (1166), ի կլայս Հռովմեական, ընդ հովանեաւ սուրբ եւ փ[առա]ւորեալ կաթողիկէ եկեղեցւոյս Լուսաւորչի՝ Սրբոյն Գրիգորի, ի հայրապետութեան աստուածաբնակ սուրբ տեառնս իմոյ տէր Գրիգորիսի, որոյ առաջն[որդութեամբ]ք եղեւ զ[րաւ գրու]թեանս իմոյ, զոր հատուցէ նմա փոխարէնս Քրիստոս Աստուած իւր առատ պարգեւացն: Գրեցաւ ձեռամբ Կոզմայի.... անարժան գրչի, հրամանաւ սուրբ եւ արհեպիսկոպոսի եւ արդիւնական վարդապետի տէր Առաքելի Անժտունեայ վերայդիտողի»¹⁵:

¹⁵ Հիշատակարանը շատ վատ է պահպանվել, առաջին հրատարակիչ Գարեգին Հովսեփյանին չի հաջողվել կարդալ գրչի անունը, որը մեծ դժվարությամբ վերծանել է Ա. Մաթեոսյանը (տե՛ս Գ. ՅՈՎՍԷՓԵԱՆ, Յիշատակարանք ձեռագրաց, հտ. Ա., Անթիլիաս, 1951, էջ 395, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե.-ԺԲ. դարեր, էջ 191–192):

Գլխավոր հիշատակարանում եղած մյուս կարեւոր հատվածը վերաբերում է Կոզմային, որտեղ նա առանց անունների տալու խնդրում է հիշել իր ծնողներին եւ եղբայրներին, միաժամանակ նշում է իր՝ նաեւ մանրանկարիչ լինելու եւ այդ մատյանը նկարազարդելու մասին. «...յիշեցէք զմեզ [պարտ գրիչ] զԿոզմա եւ ծնաւղս իմ, եւ զեղբարս իմ, զի ողորմեսցի մեզ Քրիստոս Աստուած, որ ըստ կարողութեան իմոյ յամենայն զաւուրթենէ իմմէ բազում աշխատեցի եւ ծաղկեաւնգ եւ վարդափթիթ ոսկէհոտն զարդարեցի...»¹⁶: Սույն տեղեկությունը կարեւոր է, քանի որ ժամանակին Հ. Քյուրդյանը, սույն ձեռագրին ու հիշատակարանին ծանոթ չլինելով, Կոզմային նվիրված հոդվածում այն կարծիքն է հայտնել, որ նա միայն գրիչ էր եւ ոչ մանրանկարիչ¹⁷:

Ուշագրավ է, որ մատյանում առկա է ստացող Առաքելի դիմանկարը, որի հեղինակը, բնականաբար, նույնպէս Կոզման է: Ստացողը պատկերված է՝ ձեռքին իր պատվիրած զարդարուն կազմով Ավետարանը, որն ընծայում է գահին բազմած Քրիստոսին (նկ. 1): Պատկերի վերին ձախ կողմում ստացողի անունից գրված չափածո քառատողում կարդում ենք.

«Ահա գժոյս առեալ՝ Քեզ տամ,
Բարձեալ ի ձեռս՝ առաջի գամ,
Զայս նուէրս բարեխնամ
Յիս հայեաց Տէր հաշտակամ»:

Իսկ ավելի ներքեւում գրված է. «Տէր Առաքեալ ստացաւ սորա»¹⁸:

Հետաքրքրական է, որ ստացողի՝ մատյանը Քրիստոսին ընծայելու մասին վերոհիշյալ չափածո ձեւակերպումը գրեթե նույնությամբ (աննշան փոփոխություններով) կիրառվել է Հռոմկլայում ԺԳ. դարում գրված (այդ թվում՝ Թորոս Ռոսլինի) հիշատակարաններում¹⁹: Ավելացնենք, որ Առաքել արքեպիսկոպոսի դիմանկարը հայերեն ձեռագրերում պահպանված ստացողների հնագույն պատկերներից մեկն է:

¹⁶ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե.-ԺԲ. դարեր, էջ 191:

¹⁷ Յ. ՔԻՒՐԴՅԱՆ, Կոզմա գրիչ, «Սիոն», 1972, էջ 453-463:

¹⁸ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե.-ԺԲ. դարեր, էջ 192:

¹⁹ Այդ բանը նկատել է Խ. Հարությունյանը (տե՛ս Խ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Հայերեն ձեռագրերի հիշատակարանները, Երեւան, 2019, էջ 205-206):

1166–1173 թթ., ԳՐԻԳՈՐ ԱՊԻՐԱՏ

Այս հիշատակարանը վերաբերում է ոչ թե ձեռագրի գրչությանը, այլ նորոգությանը եւ շունի սովորաբար հիշատակարաններին հատուկ մի քանի կարեւոր տվյալ՝ գրության ստույգ վայր եւ թվական: Սակայն նրանում նշված մյուս տեղեկությունները թույլ են տալիս դրանք որոշակի դարձնել: Ժամանակը Ներսես Շնորհալու աթոռակալության շրջանն է (1166–1173 թթ.), իսկ վայրը՝ Հռոմկլան, քանի որ ձեռագիրը նվիրողը՝ Ներսես Շնորհալին, ստացողը՝ Գրիգոր Ապիրատը, եւ նորոգողը՝ կաթողիկոսարանի «գրան սարկաւագ» Ստեփանոս Յակոբքին, հենց Հռոմկլայում էին²⁰:

Բուն ձեռագիրը 1066 թ. Սեբաստիայում Գրիգոր Ակոռեցու ձեռքով գրված մի արժեքավոր Ավետարան է (ՄՄ 311): Հռոմկլայի կաթողիկոսարանում գտնվող շուրջ 100-ամյա մագաղաթե մատյանը Ներսես Շնորհալին նվիրել է իր եղբայր Զորավարի որդուն՝ Գրիգոր Ապիրատին (հետագայում՝ կաթողիկոս): Նա էլ ձեռագիրը տվել է կազմելու՝ թանկագին նյութերով, իսկ գործը կատարել է Ստեփանոս Յակոբքին: Վերջինս հիշատակարանում կոչվում է կաթողիկոսի «գրան սարկաւագ», որը նրա պաշտոնն էր՝ որպես քարտուղար եւ արարողապետ, քանի որ ստացողը նրան կոչում է նաեւ «աստուածաբանական վարդապետ», որն իր Յակոբքի մականունն ստացել էր «անմոլար» վարքի շնորհիվ:

Բերում ենք հիշատակարանի հիմնական մասը. «Ես Տէր Գրիգորիս ծառա ծառայից Քրիստոսի, եղբարորդի Տեառն Ներսիսի կաթողիկոսի Հայոց եւ որդի Զաւրավարի, ետու վերստին նորոգել արտափուտ կուտ զաստուածային Աւետարանս գեղեցիկ մետաքսիւմ եւ ակամբք պատուականաւ՝ ընդելուզեալ ի մարգարտոյ մեծագնոյ, ի ձեռն աստուածաբանական վարդապետի Ստեփանոսի՝ դրան սարկաւագի տեառն իմում, որ եւ վասն անմոլար ճանաչելոյ կոչի սա Յակոբքի, ի հիշատակ ինձ եւ ծնողաց իմոց. նախ եւ առաջին հոգեւոր տեառն իմոյ Ներսէսի կաթողիկոսի, որ եւ զսոյն իսկ զԱւետարանս շնորհեաց ինձ ի զբաւսանս եւ ի խրախճանութիւնս հոգեւոր այսու զուարճանալ եւ մի՛ պատրանաւք անցաւոր կենցաղոյս....»²¹:

²⁰ Հռոմկլան այս հիշատակարանի գրության վայր է համարել Ա. Մաթեոսյանը (տե՛ս Ա. ՄԱԹԵՈՍՅԱՆ, Աշխատություններ, Երեւան, 2022, էջ 206–207):

²¹ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե.–ԺԲ. դարեր, էջ 208:

Հիշատակարանն արժեքավոր է ոչ միայն իր բովանդակությամբ, այլև նրանով, որ գրված է ստացողի ձեռքով, այսինքն՝ ապագա Հայոց կաթողիկոս Գրիգոր Զ. Ապիրատի (1194–1203) ինքնագիրն է (նկ. 2): Հետաքրքրական է, որ Գրիգոր Ապիրատը Ներսես Շնորհալուց ստացած այս Ավետարանը 1194 թ. նվիրել է Լամբրոնի եւ Պապեռոնի տեր Բակուրան իշխանին, որն իր քրոջ՝ Թագուհու ամուսինն էր (այդ մասին է վկայում ձեռագրում պահպանված հետագայի հիշատակարանը)²²:

Հիշատակարանը կարելոր է նաեւ Ներսես Շնորհալու «դրան սարկալազ» Ստեփանոս Յակոբցու անվան առաջին հիշատակության առումով, քանի որ այս գործին, որը նաեւ Տիրացու մականունն է ունեցել, մենք հանդիպում ենք նաեւ հետագա հիշատակարաններում: Ստեփանոս Յակոբցուց պահպանվել է նաեւ նրա մի մանրանկարը:

1170-ԱԿԱՆ ԹԹ., ՍՏԵՓԱՆՈՍ ՅԱԿՈԲՅԻ՝

ՄԱԿԱՆՈՒՆ ՏԻՐԱՑՈՒ

Կարելի է ասել, որ երջանիկ պատահականությամբ մեզ է հասել Ներսես Շնորհալու «դրան սարկալազ» Ստեփանոս Յակոբցու դիմանկարը՝ ստեղծված նրա կենդանության օրոք: Այն պահպանվել է մագաղաթյա մեկ թերթի վրա (ՄՄ, պատառիկ, 2098): Դրա վերաբերյալ հանգամանալից հոգված է գրել երջանկահիշատակ Գ. Տեր-Վարդանյանը²³, ուստի այստեղ մենք ավելի համառոտ կանդաղատենք պատառիկին եւ մանրանկարին: Բուն ձեռագիրը եղել է Խորհրդատետր (Պատարագատուց), որը գրիչ Հովհաննեսն ընդօրինակել է Կիլիկիայի Բարսղի անապատում՝ Ստեփանոս Տիրացու եպիսկոպոսի համար: Վերջինիս մանրանկարը ներկայացնում է ձեռնադրության տեսարան: Պատկերի ձախ կողմում՝ զույգ կամարներով շինության խորքում, ողջ հասակով կանգնած է ձեռնադրող Ստեփանոսը, որի դիմաց՝ գլուխը դեպի Ստեփանոսը հակած, ձեռնադրվողն է (նկ. 3):

Մանրանկարի շրջանակի վերին մասում գրված է «Տիրացու եպիսկոպոս», իսկ ձախ կողմում՝ շրջանակի եւ Ստեփանոսի պատկերի մեջտե-

²² Անդ, էջ 277:

²³ Գ. ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆ, Ստեփանոս եպիսկոպոս Յակովբացի, մականուն Տիրացու (նորայայտ վաւերական դիմանկարի առիթով), «Էջմիածին», 2004, Բ.-Գ., էջ 101–127:

ղում՝ «Տ(է)ր Ստեփանոս ծառա Ք(րիստոս)ի»։ Ստեփանոս եպիսկոպոսը պատկերված է լուսապսակով, ունի անհատականացված, կանոնավոր դիմագծեր, թավ մորուք եւ մոտ քառասուն տարեկան տղամարդ է։ Ձեռնադրվող երիտասարդը նույնպես հատկանշվում է անհատականացված դիմագծերով, եւ ակնհայտ է, որ նկարիչը ճանաչել է նրանց՝ աշխատելով ճշտորեն վերարտադրել նրանց կերպարները։

Գ. Տեր-Վարդանյանը Ստեփանոս եպիսկոպոսի Տիրացու մականվան վերաբերյալ հետեւյալ ուշագրավ բացատրությունն է տալիս. «Քանի որ այսօր իսկ որեւէ եկեղեցու քահանայի սպասաւորող սարկաւազին խօսակցական լեզուով գրեթէ միշտ կոչում են «տիրացու» («սարկաւազ»՝ խիստ հազուադէպ), ապա՝ գրաւոր խօսքում «դրան սարկաւազ» կոչուած Ստեփանոս վարդապետին կաթողիկոսարանի առօրեայում ամենայն հաւանականութեամբ անուանել են «Տիրացու Ստեփանոս վարդապետ» եւ այս «Տիրացու» մականուն-պատուանունը գործածուել է նաեւ նրա եպիսկոպոսացումից յետոյ, որովհետեւ նա ոչ թէ սովորական, այլ՝ կենդանութեան օրոք իսկ սրբագործուած Շնորհալի կաթողիկոսի «ՏԻՐԱՅՈՒՆ» էր»²⁴։

Ստեփանոս Յակոբցի Տիրացուն հավանաբար եպիսկոպոսական ձեռնադրություն է ստացել Ներսէս Շնորհալու մահից (1173 թ.) հետո, իսկ 1180-ական թվականներին ծառայության է տեղափոխվել Վասպուրական՝ որպէս Վարագավանքի առաջնորդ՝ միաժամանակ սերտ կապեր պահելով Կիլիկիայի եւ Հռոմկլայի կաթողիկոսարանի հետ։ Այդ մասին է վկայում Հռոմկլայում գրված 1198 թ. հիշատակարանը, որը կնեկայացվի ստորեւ։

1173 թ., ԳՐԻԳՈՐ ԳՐԻԶ (ՍԿԵՒՌԱ)

Թեպետ այս հիշատակարանը գրվել է ոչ թէ Հռոմկլայում, այլ Կիլիկիայի Սկեւռայի վանքում՝ Գրիգոր գրչի ձեռքով, սակայն այստեղ նշվում են Հռոմկլայի հոգեւորականներ, իսկ գրիչն ինքը մեկ տարի անց հիշատակարան է գրել նաեւ Հռոմկլայում։ Ձեռագիրն Ավետարան է (պահպանվել է միայն հիշատակարանը) գրվել է Կոստանդին քահանայի պատվերով, որին գրիչը կոչում է Ներսէս Շնորհալու սպասավոր («Կոս-

²⁴ Անդ, էջ 115։

տանդեան քահանայի՝ սպասաւորի Տեառն Ներսէսի կաթողիկոսի»)²⁵, այնուհետեւ նշում, որ մինչ գրչութիւնը կաւարտվեր, մահացել է Ներսէս կաթողիկոսը, որից հետո խառնաշփոթ իրավիճակ է առաջացել, քանի որ Հռոմկլայում չէր գեռեւս Գրիգոր Գ. Պահլավունու կողմից («յաւագ կաթողիկոսէն Տէր Գրիգորէ») նախանշանված հաջորդ կաթողիկոսը՝ Գրիգոր Տղան: Որոշ դժվարութիւնների հաղթահարումից հետո վերջինիս հասցնում են Հռոմկլա. «...եւ բերեալ հասուցին յանառիկ ամրոցն Հռոմկլայ ամուն կոչեցեալ, որ իւրում նախնեացն էր աթոռ սեպհական, եւ հաստատեցին զնա յաթոռ վերակացաթեան բազում խրախուժեամբ եւ մեծ հանդիսիւ»²⁶:

Հիշատակագիրը չի մանրամասնում, թե որն էր խնդիրը, բայց այդ բանը հայտնի է դեպքին ժամանակակից ու անմիջականորեն առնչված Միքայել Ասորու ժամանակագրութիւնից²⁷ եւ Ստեփանոս Օրբելյանի ժամանակագրութիւնից²⁸, ըստ որոնց՝ Ներսէս Շնորհալու մահվան ժամանակ Հռոմկլայում գտնվող նրա եղբորորդի Գրիգոր Ապիրատը, օգտվելով աթոռի համար նախապես որոշված (Գրիգոր Գ.-ի կտակով հաստատված) հաջորդի՝ Գրիգոր Տղայի բացակայութիւնից, փորձում է

²⁵ Անդ, էջ 212: Հիշատակարանի շարունակութեան մեջ ստացողն անվանվում է Կոստանդին:

²⁶ Անդ, էջ 213:

²⁷ «Իսկ տէր Ներսիսի կայր երկու եղբոր որդի եպիսկոպոսունք, եւ աւագ եղբոր որդին չէր մերձ մահու հօրեղբօրն, եւ կրտսերն առեալ զմատանին նորա՝ քարոզեցաւ կաթողիկոս: Եւ յորժամ լուաւ զայն աւագն, եկն ի Կլայն կաթողիկոսութեան, եւ ոչ թողին զնա ի բերդն, եւ նա զնաց դարձաւ առ փեսայն իւր առ պարոն Մլեհն, եւ Մլեհն էառ զնա եւ տարաւ առ Նորադինն, եւ նորին օգնութեամբն մնոյժ զնա ի Հռոմկլայն. եւ նստաւ յաթոռ հայրապետութեան հօրեղբօրն՝ Գրիգոր անուն» (Ժամանակագրութիւն տեառն ՄԻԽԱՅԷԼԻ ԱՍՈՐԻՈՑ պատրիարքի, հանեալ ի հնագոյն գրչագրէ, Երուսաղէմ, 1871, էջ 472): Միքայել Ասորին բավական հանգամանորեն է գրում դեպքի մասին, որոնց նաեւ որոշ մասնակցութիւն է ունեցել՝ մեղմելով կաթողիկոս դարձած Գրիգոր Տղայի վերաբերմունքը Գրիգոր Ապիրատի նկատմամբ (այդ մասին գրում է բերված հատվածի շարունակութեան մեջ): Նրա երկի հայերեն միջնադարյան թարգմանութիւնը եւ ասորերեն բնագիրը որոշակի տարբերութիւններ ունեն (տե՛ս Chronique DE MICHEL LE SYRIEN, Éditée pour la première fois et traduite en français par J.-B. Chabot, Tome III, Paris, 1905, էջ 353–355):

²⁸ Ստեփանոս Օրբելյանի ժամանակագրութիւնը գրվել է որպէս Սամվել Անեցու ժամանակագրութեան շարունակութիւն, որտեղ սույն դեպքի մասին ասվում է. «Գրիգորիս Ապիրատն կոչեցեալ, եղբարորդի մեծ հայրապետացն՝ Գրիգորի եւ Ներսէսի, որ եւ ի մահուան նորին, նախ սա քարոզեցաւ կաթողիկոս եւ զկնի եկն էրէց եղբար որդի վաչեղագեղն Գրիգորիս եւ ի ձեռն Մլեհայ իշխանին, հրամանաւ եւ ուժով Նորադին ամիրային Եհան զնա եւ նստաւ ինքն...» (տե՛ս ՍԱՄՈՒԷԼ ԱՆԵՑԻ ԵՒ ՇԱՐՈՒՆԱԿՈՂՆԵՐ, նշ. աշխ., էջ 231): Հնարավոր է, որ Ստեփանոս Օրբելյանի ժամանակագրութեան համար աղբյուր է ծառայել Միքայել Ասորու երկը:

ստանձնել կաթողիկոսությունը: Սակայն լինում են նրան ընդդիմացողներ: Գրիգոր Տղային սատարում է քրոջ ամուսինը՝ Կիլիկիո իշխան Մլեհը, որ մտերիմ էր Հալեպի ամիրա Նուր ալ-Դինի հետ, որի գերակայության ներքո էր Հռոմկլան այդ ժամանակաշրջանում:

Վերոնշյալ հիշատակարանում Գրիգոր գրիչը նաեւ մի ակնարկ է անում Հռոմկլայում աթոռի հաստատման հանգամանքների մասին՝ ասելով, որ այստեղ հավաքվածները, դիմելով Գրիգոր Տղային, «գրեն փութանակի գալ հասանիլ առանց իրիք պատաղանաց, զի՛ մի՛, ասեմ, աւերեսցի տունն, որ արեամբ ստացեալ է»²⁹: Այս վկայությանն ավելի մանրամասն կանդրադառնանք հաջորդ հիշատակարանին ծանոթանալիս:

Հիշատակարանի շարունակության մեջ գրիչը նշում է, որ ձեռագրի նախօրինակն իրեն շնորհել է Օշինի որդի Ներսես քահանան՝ հայտնի Ներսես Լամբրոնացին: Ապա մի հետաքրքրական տեղեկություն է հայտնում այն մասին, որ գրչագրելու ընթացքում իրեն օգնել է վերը նշված Ստեփանոս Յակոբցին՝ «Յիշեսջիք աղաչեմ եւ զայնոսիկ, որք աւժանդակ եղեն գրչիս ի գրութեան սորա, մանաւանդ զարդինական վարդապետքն զՍտեփաննոս, որ դրան սարկաւագն էր Ներսիսի հայրապետի եւ զՅակոբ եկեղեցականն»³⁰: Այստեղից կարելի է եզրակացնել, որ Ներսես Շնորհալու մահվան ժամանակ կամ անմիջապես դրանից հետո Ստեփանոսը գտնվել է Սկեւռայում: Ավելացնենք, որ նա եղել է Ներսես Լամբրոնացու ուսուցիչը³¹:

1174 թ., ԳՐԻԳՈՐ ԳՐԻԶ

Նախորդ հիշատակարանը 1173-ին Սկեւռայում գրած Գրիգորը 1174-ին, երբ կաթողիկոսական աթոռին արդեն Գրիգոր Տղան էր, Հռոմկլայում ընդօրինակել է մի Ավետարան, որն Ի. դարի սկզբներին գտնվել է Եւդոկիայում (այժմ գտնվելու վայրն անհայտ է), իսկ հիշատակարանը հրատարակել են Գ. Սրվանձտյանը եւ Գ. Հովսեփյանը³²: Հիշատակարա-

²⁹ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե.-ԺԲ. դարեր, էջ 213:

³⁰ Անդ:

³¹ Ն. ԱԿԻՆԵԱՆ, Ներսես Լամբրոնացի, արքեպիսկոպոս Տարսոնի. կեանքն եւ գրական վաստակները հանդերձ ազգաբանութեամբ Պահլաւունեաց եւ Լամբրոնի Հեթմեանց, Վիեննա, 1956, էջ 21:

³² Գ. ՎՐԳ. ՍՐՈՒԱՆԶՏԵԱՆՑ, Թորոս աղբար, Հայաստանի ճամբորդ, մասն առաջին, Կ. Պոլիս, 1879, էջ 114–118, Գ. ՅՈՎՍԵՓԵԱՆ, Յիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1951, էջ 453–460:

նր բավական ծավալուն է, առաջին հատվածը վերաբերում է Գրիգոր Գ. Պահլավունու փառաբանությանը (այդ մասին՝ քիչ հետո): Այնուհետև գրիչը նշում է, որ կաթողիկոսին փոխարինած նրա եղբայրը՝ Ներսես Շնորհալին է իրեն պատվիրել ընդօրինակել այդ Ավետարանը կաթողիկոսարանում պահվող ընտիր օրինակներից. «Ետ գրել զսա ի լաւ եւ յընտիր աւիմակաց սրբոյ աթոռոյս»՝ միաժամանակ շքեղորեն զարդարելով. «...եւ զարդարել զանագան երանգաւք եւ ծաղկաւք յոսկւոյ սրբոյ եւ ի դեղոց պատուականաց»³³:

Սակայն Շնորհալու ժամանակ ձեռագիրն անավարտ է մնացել: Գրիչն այնուհետև հիշատակարանում հակիրճ կերպով նշում է Ներսեսի մահից հետո առաջացած խառնաշփոթ վիճակի մասին. «...բազում ամպոպֆ խռովութեան ի վերայ ներմոյ եւ արտաֆոյ, յաւտարաց եւ սուտ եղբարց, զոր աւելորդ համարեցաք գրել»³⁴: Ինչպես վերելում տեսանք, նույն դեպքերի մասին մանրամասներ է հաղորդում Միքայել Ասորին: Ի դեպ՝ Մ. Օրմանյանը, վերջինիս հաղորդածը ներկայացնելով, կասկած է հայտնում դրա արժանահավատության վերաբերյալ՝ ավելացնելով, որ այդ բանը չի հաստատվում այլ աղբյուրներով. «Ազգային պատմագիրներէն ոչ մէկը բնաւ ականարկ իսկ չունի այդպիսի եղելութեանց վրայ»³⁵: Եւ չնայած Գրիգոր գրչի՝ նույն ժամանակաշրջանում գրած հիշատակարանները (1173 եւ 1174 թթ.) մանրամասները զանց են առնում, բայց հաստատում են Ներսես Շնորհալու մահից հետո աթոռակալության խնդրով առաջացած բարդությունների իրողությունը: Դարձյալ շեշտենք, որ այդ մասին նշվում է նաեւ Ստեփանոս Օրբելյանի ժամանակագրության մեջ, թեեւ հնարավոր է, որ վերջինիս համար աղբյուր է ծառայել Միքայել Ասորու երկը:

Հիշատակարանում Գրիգոր գրիչը հետեւյալ կերպ է ներկայացնում Գրիգոր Տղայի գահակալությունը՝ ընդգծելով, որ այն կատարվել է Գրիգոր Գ. Պահլավունու հրամանով ու «անդարձ կտակով». «եւ ապա ի հաւանութենէ բոլոր ազգիս եպիսկոպոսաց սրբոց հարց եւ վարդապետաց, վանականաց եւ աշխարհայնոց՝ զաւրականաց եւ զաւրապետաց, եւ ի հրամանէ գերեջանիկ տեառնն Գրիգորիսի եւ յանդարձ կտակէն Եհասս վիճակ հայրապետական եղբարորդոյ նորին տեառն Գրիգորի մակա-

³³ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե.-ԺԲ. դարեր, էջ 215:

³⁴ Անդ, էջ 216:

³⁵ Մ. ՕՐՄԱՆՅԱՆ, Ազգապատում, հտ. Ա., էջ 1694:

նուն Տղայ կոչեցելոյ»³⁶: Գրիշը շարունակում է հիշատակարանը Գրիգոր Տղայի գովաբանությամբ՝ գրելով, որ նա «զարդարեալ էր ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ, զորոյ լաւութիւն բարուց եւ զկորովութիւն մտաց ոչ ոք կարէ ընդ գրով արկանել, մանաւանդ զգեղեցկագունութիւն կերպարանին բնաւին մարմնոյն....»³⁷: Այնուհետեւ խոսվում է գահակալության եւ այլազգի ընծայաբերների մասին. «....նստուցին զսա յաթոռ սուրբ իւրում նախնեացն բազում խրախութեամբ մեծաւ հանդիսիւ, յորոյ վերայ խաղաղացեալ Հոգւոյն Սրբոյ՝ ընդ ոլորտս տիեզերաց հռչակեալ եղեւ, մինչ զի այդասեոք հեռաբնակք ընթացեալ մեծապարգեւ ընծայիւք ի տեսիլն չքնաղ եւ զարմանալի»³⁸:

Խոսքը շարունակելով՝ Գրիգոր գրիշը նշում է, որ նորընծա կաթողիկոսը, անցնելով առօրյա գործերին, մեծացնում է կաթողիկոսարանի սպասավորների թիվը, անհրաժեշտ ծիսական անոթներ է ավելացնում, անդրադառնում է նաեւ Ներսես Շնորհալու պատվիրած ու անավարտ մնացած այդ մատյանին եւ իրեն հանձնարարում գործն ավարտել. «Եւ ապա ի հանդարտեալ ընծայաբերից՝ յառաջ բերէր զաստուածեան մատենաս, ընթեռնոյր ար ըստ արէ եւ յաւելոյր ի թիւ կարգաւորաց եկեղեցւոյ վարդապետաց, երաժշտաց եւ ֆահմայից: Կազմէր եւ անաւթա պատուականքս ի սպաս պիտոյից սրբոյ աթոռոյս, յորոց եւ անաւթա այս պատուական աստուածավայելուչ մատեան, որ իմով ձեռամբ գծեալ Գրիգորի մեղապարտի, եւ անկատար մնացեալ, զորոյ պակասութիւն լցեալ իմ, հրամանաւ վերադիտողիս Հայոց Գրիգորի՝ ի թուականիս ՈԻԳ. (1174)»³⁹:

Դրանից հետո գրիշը հիշատակություն է հայցում պատվիրատու կաթողիկոսների եւ նրանց ազգականների համար: Վերջիններիս անվանապես նշելուց բացի՝ նաեւ հետաքրքրական կարճ բնութագրումներ է տալիս՝ սկսելով Գրիգոր Գ. եւ Ներսես Շնորհալի կաթողիկոսների եղբայր Վասակից. «....իշխանն Վասակ՝ զպատճառն լինելութեան ի կենցաղս նորընծայ հայրապետիս, եւ զամենայն բարեաց արինակն աշխարհի, զմիւս եղբայրն զԱպիրատ, եւ զքոյր նոցա Մարիամ յայրութեան եւ ի սրբութեան վախճանեալ եւ.... զարիագոյն զինուորսն Աստուծոյ զԱ-

³⁶ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե.-ՓԲ. դարեր, էջ 216:

³⁷ Անդ:

³⁸ Անդ:

³⁹ Անդ:

պիրատն քաջ եւ զՀասամ կորովին, զՎահրամ խոհեմըն եւ զՎասակ հեզն, զՀերոսմ պատանի....»⁴⁰:

Այս հիշատակարանի կարեւորագույն արժանիքներից է այն, որ միակ սկզբնաղբյուրն է, որտեղ պահպանվել է Գրիգոր Գ. Պահլավունու եւ Ներսես Շնորհալու մոր (Ապիրատ իշխանի կնոջ) անունը՝ Վաննի. «....եւ զ[ծնաւդ]սն նոցա զբարե[պաշտ] իշխանն Ապիրատ,զմայր նոցա Վաննի[ի]»⁴¹:

Հիշատակարանի վերջում Գրիգորն իր եւ իրեն աջակցած մարդանց համար հիշատակ է հայցում՝ նշելով նաեւ Հռոմկլայի միաբաններից երկուսին՝ գրիչ Վարդանին եւ Կոստանդինին. «Աղաչեմ եւ ես՝ մեղապարտ գրիչս, առաջին ի մեղաւորս եւ յետին ամենայն բարեգործաց՝ յիշել ողորմութեամբ զմեղուցեալ հոգի իմ եւ զծնաւղաց իմոց, եւս եւ զարժանաւորսն յիշատակի, որք աշխատեալ են յիս՝ Վարդան գրիչ եւ Կոստանդին պատուական ծերունի, միանգամայն եւ զայնոսիկ, որք բարի կամաւք աւժանդակ եղեն գրչիս՝ բանիւք եւ գործովք»⁴²:

Այս հիշատակարանի մի հետաքրքիր հատված վերաբերում է սկզբում նշված Գրիգոր Գ. Պահլավունու՝ Հռոմկլայում հաստատվելու վերաբերյալ տեղեկությանը կամ ակնարկին: Կաթողիկոսի մասին փառաբանական հատվածն ավարտելով՝ նրա մահվան մասին գրիչը նշում է. «....եւ բազում արդեամբք եւ սրբութեամբ ճոխացուցեալ զաթոռս սուրբ, լի աւուրբք եւ պատուական ծերութեամբ փոխեցաւ ի Քրիստոս յամին, յորում էր թիւս Հայոց ՈԺԵ. (1166), եւ ժամանակ հայրապետութեան նորա էին ամք Ե. (5) թիւ կատարեալ եւ Ե. միակ (այսինքն՝ 55 տարի.՝ Կ. Մ.)»⁴³ յիւր արեամբ ստացեալ ամրոց, որ կոչի Հռոմայական Կլա, մեծ սուգ թողեալ իւրոցն եւ յիշատակ բարի՝ յաշխարհի»⁴⁴:

Այստեղ, փաստորեն, Գրիգոր գրիչն ավելի է հստակեցնում Հռոմկլայի ժողովականների անունից գրված այն խոսքերը, որ մեջբերել էր նախորդ՝ 1173 թ. հիշատակարանում. «....զի՛ մի՛, ասեն, աւերեսցի տունն,

⁴⁰ Անդ, էջ 216–217:

⁴¹ Անդ, էջ 216:

⁴² Անդ, էջ 217:

⁴³ Իրականում Գրիգոր Գ. Պահլավունին աթոռակալել է 53 տարի՝ 1113–1166 թթ.: Գրիչը, «ամք Ե. (5) թիւ կատարեալ» ասելով, նկատի ունի 10 թվի կատարյալ համարվելը, այսինքն՝ ուզում է ասել 5 հատ կատարյալ թիվ (5×10=50):

⁴⁴ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե.–ԺԲ. դարեր, էջ 215:

որ արեամբ ստացեալ է»⁴⁵: Պարզ է ուրեմն, որ գրվածը Գրիգոր Գ. Պահլավունու՝ Հռոմկլայում հաստատվելու, այս բերդին տիրելու մասին է: Պետք է կարծել, որ երկու դեպքում էլ խոսքը վերաբերում է Գրիգոր Գ.-ի՝ կաթողիկոսական աթոռը ժառանգաբար, այսինքն՝ Պահլավունյաց (Գրիգոր Լուսավորչի) տոհմի հետ արյունակցական կապի շնորհիվ ստանալուն: Տեղին է հիշել Ներսես Շնորհալու՝ 1166 թ. գրված Ընդհանրական թղթում Գրիգոր Գ.-ի մասին ասված խոսքերը՝ «...հայրն մեր հոգեւոր եւ եղբայրն ըստ մարմնոյ՝ սրբազան կաթողիկոսն Գրիգորիոս՝ աթոռակալ եւ արեմառու մեծի Լուսաւորչին Հայաստանեայց...»⁴⁶: Այսինքն՝ անկախ այն բանից, թե ինչ ձեւով է Հռոմկլայի ամրոցն անցել կաթողիկոսին, դրա բուն պատճառը կաթողիկոսի՝ Լուսավորչին արյունակից լինելն էր, որի համար էլ գրիչը նրա մասին գրում է. «...յիւր արեամբ ստացեալ ամրոց, որ կոչի Հռոմայական Կլա»: Հետեւաբար՝ նոր կաթողիկոսի ընտրութեան պարագայում պետք է առաջին հերթին հաշվի առնվեր Գրիգոր Գ. Պահլավունու կամքը կամ պատգամը, եւ աթոռը փոխանցվեր նրա նախանշած թեկնածուին՝ Գրիգոր Տղային (ինչը եւ կատարվեց):

1179 թ., ՆԵՐՍԵՍ ԼԱՄԲՐՈՆԱՅԻ ԵՊԻՍԿՈՍՈՍ

ԺԲ. դարի նշանավոր եկեղեցական գործիչ, բազմաթիվ աշխատությունների ու թարգմանությունների հեղինակ, Տարսոնի եպիսկոպոս Ներսես Լամբրոնացին ուսանել է Հռոմկլայի դպրոցում, աշակերտել Ներսես Շնորհալուն, հետագայում տարբեր գործերի բերումով բազմիցս որոշակի ժամանակ բնակվել է այստեղ, դիվանական փաստաթղթերի ժողովածու կազմել, թարգմանություններ կատարել եւ այլն: Նրա մի քանի հիշատակարաններում նշվում է Հռոմկլան, որոնցից առաջինը 1179 թվականից է, վերաբերում է «Բէնէդիքտոսի Կարգ եւ զաւրէնս կրանաւորաց» գործի թարգմանությանը եւ Հովհաննու Հայտնութեան մեկնության՝ Կոստանդին մետրոպոլիթի թարգմանության սրբագրությանը: Հիշատակարանում նշում է, որ բնագիրը վերցրած գնացել է Հռոմկլա, այնտեղ պատվիրել թարգմանությունն ու այն խմբագրել. «...գնացի

⁴⁵ Անդ, էջ 213:

⁴⁶ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ, Թուղթ ընդհանրական, Սբ. Էջմիածին, 1865, էջ 2: Նույն բանը Շնորհալին գրել է ավելի վաղ՝ 1137-ին իր թարգմանած մի երկի նախագրում. «...Գրիգորիս, գոյով նախնոյն մեռոյ Լուսաւորչի արեմառու աթոռակալի անուանակիր...» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե.-ԺԲ. դարեր, էջ 160):

ի հայրապետական աթոռն որ կոչի Հռոմկլայ, յափն Եփրատայ, եւ կամաւք տեառն իմոյ կաթողիկոսին Գրիգորոյ թարգմանեցի զսա, եւ զՄեկնութիւն Յայտնութեանն Յովհաննու, ի ձեռն առաքինի մետրապոլտին Յերապոլսի Կոստանդեայ: Եւ իմովսանս տկարութեամբ յեղյեղեալ եւ ուղղեալէ թողի զսոյն յեկեղեցի Հա(յ)ոց՝ ապացոյց բարեաց եւ հրճուականք մխիթարութեան զբաղելոցն ի վարս առաքինութեան»⁴⁷:

Նույն թվականին Ներսես Լամբրոնացին մեկ այլ հիշատակարան է գրել հենց Հովհաննու Հայտնության մեկնության թարգմանության մատյանում՝ նշելով, որ այն կատարվել է Գրիգոր Տղայի հրամանով, Հռոմկլայի հայրապետանոցում հանգրվանած Կոստանդին մետրոպոլտի կողմից, որի բնագիրն ինքն է այնտեղ տարել. «...առեալ փութացայ գրովմն ի հայրապետական արքուն՝ առ տէրն իմ եւ կաթողիկոսն սուրբ Գրիգորիոս, զոր ծանուցեալ ուրախ եղեւ յոյժ, եւ հրամայեաց թարգմանել ի ձեռն մետրապոլտին Յերապոլսի Կոստանդեայ. որ անդ ի ներքոյ սրբոյ հայրապետին հովանոյ հանգչէր»⁴⁸:

Հիշատակարանի վերջում Ներսես Լամբրոնացին ուշագրավ բնութագրում է տալիս Հռոմկլային եւ այն շրջանցող Եփրատ գետին. «Թարգմանեցաւ աստուածային Յայտնութեանս Մեկնութիւն ի թուիս Հայոց ՈՒԼ. (1179), ի սուրբ եւ ի հայրապետական արքուն, որ կոչի Հռոմկլայ, շրջապատեալ յաղեմական աղբերէն Եփրատայ, որ մատակարարէ բնակչացն զամենայն մարմնական պիտոյս խնամամբն Աստուծոյ, ընդ հովանեաւ աստուածընկալ նշանին Վանկոյ եւ այլ սքանչելի սրբոցն, որ հանգուցեալ են անդր ի փառս Աստուծոյ»⁴⁹: Այստեղ հիշատակված Վանկոյ սուրբ նշանը Քրիստոսի խաչափայտի մասունքով խաչ էր, որը համարվում էր կաթողիկոսարանի գլխավոր սրբություններից մեկը եւ հիշատակվում է դեռեւս 1144-ին՝ Ծովամարտում գտնված ժամանակ Ներսես Շնորհալու հեղինակած մի շրջաբերականում՝ Սբ. Գրիգոր Լուսավորչի Աջից առաջ. «...ողջոյն սիրոյ եւ խաղաղութեան՝ հասցէ աստուածընկալ Սրբոյ Նշանէս Վանկոյ եւ առաքելական նշխարացս եւ Սուրբ Լուսաւորչին մերոյ Աջէս»⁵⁰: Այլ գրություններ

⁴⁷ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե.-ԺԲ. դարեր, էջ 227:

⁴⁸ Անդ, էջ 229:

⁴⁹ Անդ:

⁵⁰ Ներսեսի Շնորհալույ Հայոց կաթողիկոսի նամականի, Վենետիկ, 1838, էջ 279: Այս սրբազան խաչին նվիրված հոգված ունի Ներսես Աղիւնյանը (տե՛ս Ն. Ա. ԿԻՆԵԱՆ, Վանկոյ Սուրբ Նշանը, «Հանդէս Ամսօրեայ», 1909, էջ 312–314):

րում, ինչպես Ընդհանրական թղթում, այն կոչում է «աստուածընկալ եւ փրկական Սուրբ Նշան»⁵¹:

Հետաքրքիր է, որ Լամբրոնացին, Եփրատի՝ դրախտի չորս գետերից մեկը լինելու հանգամանքը նկատի ունենալով, գրում է, որ Հռոմկլան շրջապատված է եղեմական («յադենական») աղբյուրով, նաեւ ընդգծում գետի տնտեսական կարեւոր դերը բերդավանի բնակչության համար՝ «որ մատակարարէ բնակչացն զամենայն մարմնական պիտոյս»:

1173–2003 ԹԹ., ԳՐԻԳՈՐ ՏՂԱ ԿԱՄ ԳՐԻԳՈՐ ԱՊԻՐԱՏ

1294 թ. Կիրակոս Երեցի ընդօրինակած՝ Ներսես Շնորհալու երկերն ամփոփող «Ժողովածուի» մեջ (ՄՄ 2496)՝ հեղինակի մի երկի («Տեառն Ներսեսի կաթողիկոսի ասացեալ բանս մախթանաց առ սուրբ հրեշտակս ոտանաւոր չափով») վերջում, պահպանվել է հետեւյալ ուշագրավ հիշատակարանը. «Ասացաւ եւ գրեցաւ ի Ներսէսէ եպիսկոպոսի եղբարէ կաթողիկոսի Հայոց Գրիգորիսի, որ եկաց յաթոռ հայրապետութեանն զամս ԾԳ. (53), ամաց քսանից նստեալ վերատեսուչ Ասքանազեանս տոհմի, եւ ապա հասեալ ի բարիոք ծերութեան, ձեռնադրեաց զայս Ներսէս՝ եղբայր իւր ըստ մարմնո եւ տիեզերալոյս վարդապետ, եւ փոխեցաւ ինքն առ Քրիստոս, եղեալ ամաց եաւթանասուն եւ հնգից: Եւ սա կացեալ ի հայրապետութեան անդ, ամս է. (7), եղեալ ամաց յիսուն եւ վեցից, եւ փոխեցաւ առ Քրիստոս ամաց վաթսուն եւ երից, որ բազում իմաստութեամբ իւրով ջանաց լուսաւորել զազգըս Հայոց, յորոց բազմացն մի է եւ այս Գովասանութիւն սրբազնապետացն հրեշտակացն՝ բան ասացեալ նմա, ի թուականիս Հայոց ՈԺԱ. (1162), ի Կլայն Հռոմական, ի թըշուառութեան ժամանակի, զոր յիշել յաղաւթս աղաչեմ լսաւըքդ բանիս եւ ընդաւրինակողք ի Քրիստոս Յիսուս, ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս:

ԶԳրիգորիս ողի եղբար սոցա՝ զայսոսիկ գրող, յիշեցէք ի Քրիստոս»⁵²:

Ինչպես տեսնում ենք, վերջին տողում նշվում է հիշատակարանի հեղինակի անունը՝ որպես Գրիգոր Գ. Պահլավունի (1113–1166) եւ Ներսես Գ. Կլայեցի (1166–1173) կաթողիկոսների եղբորորդի («որդի եղբար սոցա»)՝ Գրիգորիս: Վերջինս կարող է լինել Գրիգոր Տղան՝ Շնորհալու հա-

⁵¹ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ, Թուղթ ընդհանրական, էջ 2:

⁵² Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե.-ԺԲ. դարեր, էջ 270:

ջորդը (1173–1193)՝ իր ավագ եղբայր Վասիլի որդին, եւ կամ կաթողիկոսների Զորավար եղբոր որդին՝ Գրիգոր Ապիրատը:

Ինչպես նշվեց, հիշատակարանը բուն մատյանի հետ ընդօրինակել է Կիրակոս Երեցը 1294 թ.: Հիշատակարանն արժեքավոր է նախ եւ առաջ նրանով, որ այստեղ նշվում է Ներսես Շնորհալու վերոնշյալ երկի գրության թվականը՝ 1162: Բայց ավելի ուշագրավ են Գրիգոր Գ. Պահլավունու եւ Ներսես Շնորհալու աթոռակալության տարիների եւ մահվան ժամանակ նրանց տարիքի մասին նշումները, որոնք թույլ են տալիս հաշվարկելու նաեւ նրանց ծննդյան թվականները: Եւ եթե Գրիգոր Գ. Պահլավունու դեպքում այստեղ առանձնապես նորոգվումն չկա, ապա Ներսես Շնորհալու պարագայում տեսնում ենք նրա ծննդյան մասին մինչ այժմ շրջանառված թվականներից զգալիորեն տարբերվող պատկեր:

Ներսես Շնորհալուն վերաբերող տվյալները, ըստ հիշատակարանի, հետեւյալն են. հիսունվեց տարեկանում ընտրվել է կաթողիկոս, աթոռակալել է յոթ տարի, մահացել վաթսուներեք տարեկան հասակում: Քանի որ կաթողիկոսի յոթամյա աթոռակալության եւ մահվան թվականները ստույգ հայտնի են՝ 1166 եւ 1173, ուստի նրա ծննդյան թվականը, ըստ աթոռակալության ժամանակ ունեցած հասակի (1166–56=1110), լինում է 1110-ը եւ ըստ մահվան ժամանակի տարիքի (1173–63=1110)՝ նույնպես 1110-ը:

Այնինչ Ներսես Շնորհալու կենսագրությանն անդրադարձած գիտնականները մինչեւ այժմ, որպես նրա ծննդյան թվական, ենթադրաբար նշում են 1098⁵³, «մոտ 1100....»⁵⁴ (ամենատարածվածը), «շուրջ 1101....»⁵⁵, «1101 կամ 1102»⁵⁶, «1102»⁵⁷: Ինչպես տեսնում ենք, Գրիգոր եղբորորդուն նշած 1110 թվականի համեմատ՝ տարբերությունը բավական մեծ է:

⁵³ Ա. ՄԱԳՈՅԱՆ, «Ներսես Շնորհալի», Հայ մշակույթի նշանավոր գործիչները, Երեւան, 1976, էջ 256:

⁵⁴ Մ. ՕՐՄԱՆԵԱՆ, Ազգապատում, հտ. Ա., էջ 1636, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, էջ 787, Հայոց պատմություն, հտ. II, գիրք երկրորդ, Երեւան, 2014, էջ 446, Պ. ԽԱԶԱՏՐԵԱՆ, Հայ հին գրականության մատենագիտություն, լրացրեց եւ խմբագրեց Ա. Բանուչեանը, Երեւան, 2016, էջ 418 եւ այլն:

⁵⁵ Մ. ԱՐԵՊՅԱՆ, Երկեր, հտ. Դ., Երեւան, 1970, էջ 98:

⁵⁶ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ, Տաղեր եւ գանձեր, աշխատ.՝ Ա. ՔՅՈՇԿԵՐՅԱՆԻ, Երեւան, 1978, էջ Ը.:

⁵⁷ Հ. ԱՃԱՌՅԱՆ, Հայոց անձնանունների բառարան, հտ. Դ., Երեւան, 1944, էջ 44, Բ. ԿԻՒԼԵՍԵՐԵԱՆ, նշ. աշխ., էջ 43, Գ. ՄՈՒՐԱԳԵԱՆ, Ռ. ՊՕՂՈՍԵԱՆ, «Ներսէս Շնորհալու չափածոյ թուղթը եւ խրատք», Մատենագիրք հայոց, հտ. ԻԱ., ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ, գիրք Ա., Երեւան, 2018, էջ 459:

Զարմանալի կերպով ներսես Շնորհալու ծննդյան թվականի մասին Գրիգոր եղբորորդու վերոնշյալ տեղեկությունն ուսումնասիրողներին անծանոթ է մնացել: Ավելացնենք, որ բազմաշնորհ կաթողիկոսի ծննդյան 1110 թվականի օգտին խոսող նաեւ այլ փաստարկներ կան, որոնք մենք հանգամանորեն ներկայացրել ենք առանձին հրապարակմամբ⁵⁸:

1193 թ., ԱՆԱՆՈՒՆ ԳՐԻԶ (ՊՈՂՈՍԱԿԱՆ ԱՆԱՊԱՏ)

Հիշատակարանը Հռոմկլայում չի գրվել, սակայն ստացողը տեղի բնակիչ է: Գրիչը բավական հանգամանորեն անդրադառնում է ժամանակի օրհասական դեպքերին (Սալահեդդինի կողմից Երուսաղեմի գրավում եւ այլն), նշում նաեւ Գրիգոր Տղա կաթողիկոսի մասին, որն «ունէր զաթոռ հայրապետական Սրբոյն Գրիգորի, որ եւ շառափոլ գոլով նորին՝ Լուսաւորչին Հայոց, պահպանեալ ընդ ամրածածուկ աջովն Աստուծոյ յամուր դղեկին կոչեցեալ Ռոմելիոսի Կլայ, որ եւ սա բազում նեղութիւնս կրեալ ի շրջաբնակ այլազանիցն»⁵⁹: Զեռագրի ստացող Կոստանդնի մասին ասվում է, որ սա բնակվում էր կաթողիկոսի մոտ, այսինքն՝ Հռոմկլայում, որտեղ արժանացել է եպիսկոպոսական ձեռնադրության. «....բնակելով առ սուրբ հայրապետին տեառն Գրիգորի, որ եւ արժանաւորեալ աստիճանի եպիսկոպոսութեան»⁶⁰:

Մատչանը գրվել է Կատեն ամրոցի մոտ գտնվող Պողոսական անապատում. «Գրեցաւ սա յանապատիս որ կոչի Պաւղոսական, մերձ առ ամուր դղեկիս Կատինոյ, առ....»⁶¹: Սա Կիլիկիայի Կատեն ամրոցին վերաբերող ամենավաղ հիշատակությունն է⁶²: Հետաքրքրական է, որ կիլիկյան այդ ամրոցի երկրորդ հիշատակությունը պահպանվել է 1248 թ.

⁵⁸ Կ. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ, Ներսես Շնորհալու ծննդյան թվականն ըստ իր եղբորորդի Գրիգորի հիշատակարանի, «Բանբեր Մատենադարանի», № 35, 2023, էջ 44–55:

⁵⁹ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե.-ԺԲ. դարեր, էջ 272:

⁶⁰ Անդ, էջ 273:

⁶¹ Անդ:

⁶² Սույն ամրոցի տեղադրությանն անդրադարձել է Ս. Գրիգորյանը Կիլիկյան Հայաստանի պատմաաշխարհագրական հարցերի ուսումնասիրությունը ներառող իր դոկտորական ատենախոսության մեջ՝ կարծիք հայտնելով, որ Կատենը գտնվել է այժմյան Դյուդենլի քաղեսիի շրջանում, որի մոտակա «Bossek/Bosfenk»-ն էլ կարող է նույնացվել «Պողոսական» վանքի հետ (տես Ս. GRIGORYAN, Les Arméniens et les Francs : étude historique et géographique de la noblesse et de son implantation dans l'Arménie méditerranéenne, thèse pour obtenir le grade de docteur, Université Paul-Valéry Montpellier III 2021, էջ 524 (անտիպ):

Պետրոս երեցի՝ Հռոմկլայում գրած հիշատակարանում⁶³, իսկ պատմիչների երկերում ամրոցը չի հիշատակվում:

1198 թ., ՅԱԿՈՎԲ

Վարազավանքից Հռոմկլա եկած գրիչ Հակոբի հիշատակարանը՝ գրված Ներսես Շնորհալու «Մեկնութիւն կաթողիկեաց թղթոց» երկը պարունակող մատյանում, մի հետաքրքիր պատմություն է այն մասին, թե ինչպես է ինքը, իր վանահոր՝ Տիրացու մականունով Ստեփանոսին (նրա մասին նշվեց վերելում) ուղեկցելով, Վասպուրականից եկել Հռոմկլա, որից հետո վերջինս, կաթողիկոսին ուղեկցելով, ներկա է գտնվել Լեւոն Մեծագործի թագադրությանը: Թեեւ գրիչը հիշատակարանում Ստեփանոսին վարդապետ է անվանում, բայց, կարծում ենք, որ այդպիսով շեշտում է նրա գիտնական եւ ուսուցիչ լինելու հանգամանքը. Ստեփանոսը հավանաբար եպիսկոպոս էր: Պատահական չէ, որ ըստ նույն հիշատակարանի՝ Վարազավանքի առաջնորդի պաշտոնում Ստեփանոսի նախանվանած երիտասարդ հաջորդն արդեն իսկ եպիսկոպոս էր. «Եւ գրեցաւ ի Ոհէ. (1198) թուիս.... զոր Աստուած վայելել տացէ տէր Ստեփաննոսի՝ մականունն Տիրացու, բազում ամաւք խաղաղականաւք.... եւ իւր ժառանգին՝ տէր Սարգսին, նորընծայ եպիսկոպոսի, բառի եւ իմաստուն պատանեկի....»⁶⁴: Գրիչը հավելում է, որ Ստեփանոսը Սարգիս եպիսկոպոսին է փոխանցել իր լիազորությունները, որոնց ներկայացումից երեւում է, որ Ստեփանոսի հոգեւոր իշխանությունը տարածված է եղել նաեւ Վանի («Շամիրամաշէն քաղաք») ու նրա շրջակայքի վրա⁶⁵:

Հիշատակարանի սկզբում ասվում է, որ Ստեփանոսն ստացել էր կաթողիկոս Գրիգոր Ապիրատի հրավերը՝ «նամակաւ ի հոգեւոր տեառն Գրիգորիսէ կոչեցեալ լինէր ի Կլայն, զոր Հռոմ կոչեն», եւ վերջինս

⁶³ Հիշատակարանում բերդի մասին ասվում է. «....գբարձր դղեակն եւ զանմատոյցն զԿատենայ....» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ. դար, կազմեց Ա. Մաթեւոսյանը, Երեւան, 1984, էջ 242):

⁶⁴ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե.-ԺԲ. դարեր, էջ 294:

⁶⁵ Ստեփանոսը Տեր Սարգսին.— Կ.Մ., «....ընտրեաց եւ կառուց իւր փոխան եւ տեսուչ անապատիս Սուրբ Խաչի, ստացուածոց եւ ամենայն գոյից, բազում եւ պէսպէս պնդութեամբ կտակաւ գրով, կամակցութեամբ եւ յաւժարութեամբ եպիսկոպոսաց եւ վարդապետաց եւ համարէն քանակաւից...., այլ եւ դատաւորաց եւ իշխանաց Շամիրամաշէն քաղաքի եւ այլ գետալից»: Հիշատակարանում Հակոբ գրիչն անվանապես նշում է նաեւ Վարազավանքի միաբաններից մի քանիսին (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե.-ԺԲ. դարեր, էջ 294–295):

հնազանդվելով՝ առանց ծերությունը կամ մեկ այլ պատճառ բերելու, իր դպիր Հակոբին հետը վերցնելով («ընդ իւր տարեալ եւ զիս»)՝ ճանապարհ է ընկնում եւ բազմաթիվ հանգրվաններ անցնելով՝ վերջապես հասնում է ցանկալի վայրը, որտեղ միմյանց տեսնելով՝ մոռանում են ճանապարհի դժվարութիւնները. «Եւ զբազում աւթեւանաւք զանց արարեալ հասաք ի բաղձալին, եւ ի տեսանելն զիրեարս՝ մոռացաք զաշխատութիւն»⁶⁶:

Հռոմկլայում Ստեփանոսը տեսել է Սարգիս Շնորհալու՝ Կաթողիկեից թղթոց մեկնութիւնը եւ ցանկացել է դրա ընդօրինակութիւնն ունենալ, որը հանձնարարել է Հակոբին. «Եւ ի լինելն անդ՝ ետես զգիրքս զայս եւ փափաքեաց.... եւ հայրս իմ ըստ հոգւոյ, հրամայեաց շարայարել ի քարտիզի»: Հետաքրքիր է, որ գրքի նախօրինակը տրամադրել է հենց կաթողիկոսը («զտէր Գրիգորիս արժանապատիւ կաթողիկոսն Հայոց.... յիշեսչիք.... յորոյ աւրինակի գրեցաւ գիրքս այս»)՝ Ուշադրութեան արժանի է նաեւ գրչի վկայութիւնն այն մասին, որ Հռոմկլայում ձեռագիրն ընդօրինակելիս իրեն են մոտեցել մարդիկ, որոնք կամեցել են աջակցել այդ գործում եւ անգամ որոշ մասեր իրենք են գրել. «....եւ ի շարադրելն իմում անդ, գային առ իս այլք ոմանք, եւ հոգաբարձու եղեալ առ իս, օգնել կամեցեալ՝ գրէին եւ նոքա, որպէս երեւիդ»⁶⁸:

Հակոբն այնուհետեւ նշում է, որ այդ օրերին, երբ Գրիգոր Ապիրատը մեկնում է Լեւոնի թագադրութեանը, որին գրիչը համեմատում է Տրդատ Մեծի հետ, տանում է նաեւ Ստեփանոսին. «Եւ զկնի աւուրց այլ ճանապարհ առաջի եղաւ իմում տեառնս եւ կաթողիկոսին Հայոց, զի կոչեցեալ եղեն ի Լեւովնէ, որ այժմ.... ստացաւ զաւգոստական զծիրանափայլ պատմութեանն եւ ընկալաւ զաւծումն որպէս զՄեծն Տրդատ, կամակցութեամբ արիական ազգին Յունաց, բերեալ նմա նշան զխաշանիշ թագն: Եւ նորա պատուասիրաբար կոչեցեալ զհոգեւոր տէր Գրիգորիոս, զի երթիցէ եւ աւծցէ զնա սրբարար եւ մաքրագործակ մեռոնաւն եւ պսակեցէ զգլուխն խաշանշան դրոշմաւ: Եւ հոգեւոր տեառն ընդ իւր տարեալ, զիմ տէրն....»⁶⁹:

⁶⁶ Անդ, էջ 293:

⁶⁷ Անդ, էջ 295:

⁶⁸ Անդ, էջ 293:

⁶⁹ Անդ, էջ 293: Հիշատակարանն արժեքավոր սկզբնաղբյուր է Լեւոնի թագադրութեան որոշ մանրամասների ճշգրտման տեսանկյունից, որոնց անդրադարձել է Վահե Թորոսյանը (Վ. ԹՈՐՈՍՅԱՆ, Կիլիկիայի Հայոց թագավոր Լեւոն Մեծագործի թագադրման խնդրի շուրջ, «էջմիածին», 2016, ԺԲ., էջ 86–88):

Այս տեղեկությունը հետաքրքրական է նաեւ այն առումով, որ Լեւոնի թագադրության հանդեսի մասնակիցների մասին հաղորդող հեղինակները (օրինակ՝ Սմբատ Սպարապետը, որը նշում է տասնչորս եպիսկոպոսի անուն) եւ էլի մի քանի ուրիշներ, որոնք թագադրության արարողության մասնակիցների թվում հիշում են նաեւ վարդապետների, բուն Հայաստանից եկած որեւէ մեկին չեն հիշատակում, ինչից ելնելով՝ Մ. Օրմանյանը գրում է. «Յիշուածներն ամենն ալ Կիլիկիոյ եւ անոր յարակից վիճակներու եպիսկոպոսներ են, իսկ Հայաստանէ եւ Իկոնիոյ սահմաններէն բնաւ մէկը յիշուած չէ»⁷⁰: Ինչպես տեսնում ենք, Հակոբ գրչի հիշատակարանը թույլ է տալիս Լեւոնի թագադրության փառավոր հանդեսի մասնակիցների շարքում ավելացնել Հայաստանից գնացած՝ Վարազավանքի առաջնորդ Ստեփանոս Տիրացուի անունը, թեկուզ եւ նա այդտեղ էր հայտնվել կաթողիկոս Գրիգոր Ապիրատի անձնական հյուրի հանգամանքով:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հռոմկլան Հայոց կաթողիկոսական աթոռանիստ է դարձել 1151 թ., որտեղ գահակալող Հայոց կաթողիկոսներն օժտված էին նաեւ աշխարհական իշխանությամբ եւ հանդիսանում էին բերդատեր: Մինչեւ ԺԳ. դարասկիզբն այստեղ աթոռակալող կաթողիկոսները՝ սկսած Գրիգոր Գ. Պահլավունուց (1113–1166) մինչեւ Գրիգոր Զ. Ապիրատ (1194–1203), Պահլավունյաց տոհմի հետ կապված էին մայրական գծով, սակայն ազգակցության այս հանգամանքը՝ որպես Սբ. Գրիգոր Լուսավորչի սերունդ, նրանց թույլ էր տալիս հաջորդաբար հանդես գալ իբրեւ աթոռի ժառանգորդ:

Հռոմկլայի հիշատակարանները, որոնք վերաբերում են ԺԲ. դարի երկրորդ կեսին, կարեւոր սկզբնաղբյուր են կաթողիկոսանիստ բերդի պատմության եւ մշակութային ժառանգության ուսումնասիրության համար: Դրանք թույլ են տալիս պատմական, մշակութային եւ այլ մեծ ու փոքր հարցերի շուրջ կարեւոր լրացումներ ու ճշգրտումներ կատարել: Դրանցից են Պահլավունյաց տոհմից սերված կաթողիկոսների մասին վկայությունները, Ներսես Շնորհալու մահից հետո՝ մինչեւ Գրիգոր Տղայի աթոռակալությունը, Հռոմկլայում առաջացած բարդությունների

⁷⁰ Մ. ՕՐՄԱՆՅԱՆ, Ազգապատում, հտ. Ա., էջ 1810:



Նկար 1. Ստացող Առաքել արհեստիկուհուր Քրիստոսի առաջ,
Հոռմկլա, 1166 թ. (ՄՄ ձեռ. 7347, էջ 11բ)

Լեւո - Լեւոն -
 Էսո - Էսոն -
 Ու - Ուն -

Ծագելոյ՝ Ինենն ամարա-
նական վարդապետի՝
ստեփանոսի դրան ասը
կաւ ագի տն իմոսմ, որե
վան անմողար ճանաչե
լոյ՝ Կոստաս յակոբ ցի-
ի յիշատակ ինչ եւ ծնողա
ցի մոց. նախառաջի
հոգեւոր տն իմոյ՝ նկոսե
սիկաթ ուղիկոսի որեւ
զսոյն իսկ զաւետարանն
ընորհեացին՝ ի զբաւ
սանն և եկեղեցի ճան ու
թեւնս հոգեւոր՝ այսու
զուարճանալ եւ միշտ
սորան աւքանցաւ որպէ
նցաղոյս՝ Ըրդ որքըն
թեոնոյք կամաւ կտիքի
սմանէ. Թող ութն մե
ղացին դրեցէք իմե յատա
հասացելոցս. զի ետու
իչն յիշողաց տեյի լեցելոցս
ողորմեսցի, ամեն։

(U²³⁵ 311, 59 219p)



Նկար 3. Ստացող Ստեփանոս Տիրացու եպիսկոպոսը, 1170-ական թթ.
(ՄՄ ձեռ. 2098, պատարիկ)

վերաբերյալ տվյալները, Ներսես Շնորհալու ծննդյան 1110 թվականի մասին նրա եղբորորդի Գրիգորի հայտնած տեղեկությունը, որը նախկինում չի դրվել շրջանառության մեջ, Կոզմա գրչի՝ նաեւ մանրանկարիչ լինելու իրողության հաստատումը, Հռոմկլայում ստեղծված ձեռագրերի եւ մանրանկարներում որոշ գործիչների ուշագրավ դիմանկարների ներկայացումը եւ այլն:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Ներսես Շնորհալի, կաթողիկոս, Հռոմկլա, Սկեւռա, հիշատակարան, Կիլիկիա, Եփրատ

РЕЗЮМЕ

Ромкла стала резиденцией армянского католикоса в 1151 году. Правящий здесь армянские католикосы также были светскими владельцами этой крепости. До начала XIII-ого века находящиеся здесь католикосы, начиная с Григора III Пахлавуни (1113—1166) до Григора VI Апирата (1194—1203), были связаны с родом Пахлавуни по материнской линии, и это обстоятельство родства (как поколение св. Григора Просветителя) позволило им последовательно выступать в качестве наследников престола.

Памятные записи рукописей относящиеся ко второй половине XII века, являются важным источником истории и культурного наследия Ромклы. Они позволяют внести некоторые дополнения и корректировки по историческим, культурным и другим большим и малым вопросам. Среди них сведения об осложнениях, возникших в Ромкле после смерти католикоса Нерсеса Шнорали до восшествия на престол Григора Тга, выявление даты рождения Нерсеса Шнорали в 1110 году, то, что переписчик Козьма был еще и миниатюристом, подробности создание некоторых рукописей и ценных миниатюрных портретов в Ромкле и т. д.

SUMMARY

Romkla became the residence of the Armenian Catholicos in 1151. The Armenian Catholicos ruling there were also the secular owners of that fortress. Until the beginning of the 13th century, the Catholicos located there, starting from Grigor III Pahlavuni (1113–1166) to Grigor VI Apirat (1194–1203), were connected with the Pahlavuni family on the maternal lineage, and this circumstance of kinship (as the generation of St. Gregory the Illuminator) allowed them to successively act as heirs to the throne.

Colophons of manuscripts dating back to the second half of the 12th century are an important source of history and cultural heritage of Romkla. They enable to make some additions and corrections on historical, cultural and other big and small issues.

They include information about the complications that arose in Romkla after the death of Catholicos Nerses the Graceful, prior to the accession of Grigor Tgha to the throne; the determination of the date of birth of Nerses the Graceful in 1110, the fact that the scribe Kozma was also a miniaturist, details of the creation of some manuscripts, valuable miniature portraits in Romkla, etc.

